**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ**
**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՆՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ**

(Հաշվետու ժամանակահատված՝ 2025 թվականի փետրվարի 11-ից մինչև 2025 թվականի հուլիսի 4-ը)

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Տնտեսական սպասարկումը իրականացնող փորձագետ Էդգար Աթյանս, հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ ստորև ներկայացված աշխատանքները.

**Ընդհանուր գործառույթներ**

1. Հանձնաժողովի տնտեսական սպասարկման աշխատանքների իրականացում:

2. Հանձնաժողովի տնտեսական գույքի պահպանության ապահովում, և ըստ անհրաժեշտության դրանց վերականգնման և համալրման մասին առաջարկությունների ներկայացում:

3. Հանձնաժողովի աշխատակիցներին անհրաժեշտ ապրանքներով, սարքավորումներով, նյութերով և ավտոպահեստամասերով ապահովում:

4. Հանձնաժողովի ապրանքանյութական արժեքների ստացման, պահպանման, տրամադրման և հաշվառման աշխատանքների իրականացում:

5. Հանձնաժողովի վարչական շենքի կոմունալ ծառայությունների տեխնիկական սպասարկման ապահովում, և ըստ անհրաժեշտության շենքի ընթացիկ կամ հիմնական վերանորոգման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

6. Հանձնաժողովի էլեկտրաէներգիայի, հեռախոսակապի, կապի, գազի մատակարարման, ջրամատակարարման բնականոն աշխատանքների ապահովում՝ համագործակցելով համապատասխան մարմինների հետ:

7. Հանձնաժողովին և աշխատակիցներին օգտագործման հանձնված գույքի գույքագրման աշխատանքների մասնակցություն:

8. Հանձնաժողովին և աշխատակիցներին օգտագործման հանձնված գույքի պարբերական զննման իրականացում, և ըստ անհրաժեշտության դուրսգրման ենթակա ապրանքների ցանկի ներկայացում:

9. Հանձնաժողովի պահեստի ապրանքաշրջանառության վերահսկում:

10. Նյութական արժեքների եռամսյա գույքագրման իրականացում, և տվյալների համեմատում հաշվապահական տվյալների հետ:

11. Հանձնաժողովի աշխատակիցներին անհրաժեշտ ապրանքների հատկացում՝ համաձայն Հանձնաժողովի գլխավոր քարտուղարին ներկայացված պահանջագրերի:

12. Ըստ հանձնարարականի Հանձնաժողովի գնման գործընթացներին մասնակցություն:

13. Հանձնաժողովի էլեկտրական և սանտեխնիկական սարքավորումների վերանորոգման աշխատանքների վերահսկում, և ըստ անհրաժեշտության դրանց փոխարինման ընթացքի ապահովում:

14. Հանձնաժողովի վարչական շենքի վիճակի վերահսկում և ձմեռային շահագործման անցնելու նախապատրաստական աշխատանքների իրականացում:

15. Հանձնաժողովի համաճարակային պահանջների և հակահրդեհային անվտանգության կանոնների պահպանության ապահովում:

16. Հանձնաժողովի համակարգչային տեխնիկայի անխափան աշխատանքի ապահովում:

17. Բենզինի կտրոնների ստացում, տրամադրում, հաշվառում և ամսական կտրվածքով հաշվետվության ներկայացում:

18. Հանձնաժողովի պահեստի պահպանության ապահովում:

**Կոռուպցիայի Կանխարգելման Հանձնաժողովի փորձագետ**

**Էդգար Աթյան**

**04.07.2025թ.**